Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/9>> ծածկագրով ՀՀ Արմավիրի և Վայոց Ձորի մարզերի և Դիլիջան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

05.09.2019թ.
Ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Մաթևոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մարտիրոսյան
Լ. Պայլան
Ա. Հակոբյան
Ն. Մանուկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/9>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին ու հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ս.Մաթևոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 20.08.2019թ.

- հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ի, <<Զանգված>> և <<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ 3 մասնակիցներն էլ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց պարտավորություններ և, 3 մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշները համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

բ) ծանուցվել է 1-ին տեղեր զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

14-րդ չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Զանգված>> ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում *(ծանուցումն ուղարկելու օրվանից մինչև 23.08.2019թ. ժամը 18:00)* ընդհանրապես չի

ներկայացվել *(23.08.2019թ. ներկայացվել են թվով 2 էլեկտրոնային փաթեթներ, համապատասխանաբար, ժամը 18:23-ին և 18:25-ին):*

1.2 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը, ինչպես նաև սույն արձանագրության 1.1 կետի բ) ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է մերժել <<Զանգված>> ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել սույն ընթացակարգի 14-րդ չափաբաժնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ին:

1.3 <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/9>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 4-րդ և 7-րդ չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ա) Մասնագիտական փորձառության մասով՝

Որպես նմանատիպ ներկայացրած պայմանագրի հաշիվ ապրանքագրերը և հանձնման-ընդունման արձանագրությունները հաստատված են միակողմանի,

բ) Աշխատանքային ռեսուրսների մասով

Չեն ներկայացվել Կարեն Առաքելյանի բարձրագույն դասի «Ա» և «Բ» ենթադասերի արտոնագրերը:

1.4 Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ անհրաժեշտ է ծանուցել <<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները: Համաձայն Կարգի 48-րդ կետի՝ սահմանված ժամկետում Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու դեպքում հայտը կգնահատվի բավարար և <<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ն վերը նշված չափաբաժինների մասով կհայտարարվի ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար, կմերժվի և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

2. <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/9>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ս.Մաթևոսյան)

2.1 Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի և գնահատման թերթիկների համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և 2,3,5,6,8,9,10,11,12,13,14 և 15 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ին, 1, 4 և 7 չափաբաժինների մասով՝ <<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ս.Մաթևոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է անգործության

ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս.Մաթևոսյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Մաթևոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մարտիրոսյան

Լ. Պալյան

Ա. Հակոբյան

Ն. Մանուկյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան